Եւ որ հասոյթքն են՝ սահմանեալք 'ի Ս. Աթոռոյդ և 'ի ձեռնտուութենէ լրութեան ազգիս 'ի Կոստանդինուպոլսոյ կամ արտաքուստ, հաղիւ բաւեն յօր ըստ օրէն պիտոյս։ Իսկ պարտիք չինութեան, եթէ վտահ 'ի հասոյթսն լինիցիմք ցայս վայր հայթայթեալս, յաւիտեան մնասցեն անվճարելիք։ Եւ անմարթ է ծանրաբեռնել 'ի վերայ ազգիս և զայս բաժ 'ի վճար պարտուցն. որ ոչ դոյզն ինչ է, որպէս տումար հաշուին ակներեւ ցուցանէ զամենայնն. քանզի տուրք ծանրացեալ են 'ի վերայ ազգին և ծանրանային օր քան զօր. տուրք բազմատեսակք թէ 'ի քաղաքական սակի, և թէ յազգային, և այս եւս բաժին յաւելեալ յամենայնին վերայ. քամէ զոյժ նոցա առ հասարակ, և զամենեցուն բերան բանայ 'ի տրտունջ ծանր, եւ ուստանց հետեւութիւն ատելի յոյժ լինի այնուհետեւ առ մեծամեծս և առ փոքունս։

Առ այս խորհուրդ կալեալ ազգովին պատշաճ դատեցաւ, Սրբոյ Աթոռոյդ սեպհականել և զայս պարծանս ազատելոյ զձեմարանս 'ի պարտուց անտի չինութեան, որ այլազգ անվճարելի է։ Վասն այսորիկ ձեռամբ Բարձր արժանապատիւ Փոխանորդի Ս. Աթոռոյդ Տ. Յովհաննու Արք Եպիսկոպոսի, դրամ դումարի պարտուցն երեք հարիւր եօթն հազար ղուրուշ ընկալեալ եղեւ աստ ամբողջ 'ի Սինեօր Զիչինեա Բանտեա վաճառականէն, եւ տուաւ նմա թուղթ Փոլիցայի յանուն Ս. Աթոռոյդ, վճարելի առ եղբայր նորա Սինեօր Իստիֆանաքի Զիչինեա վաճառականն ընակեալ յԱղէքսանդրիա, երեսուն և մի աւուրքք յետ տեսութեան Փոլիցային։ Աներկբայ գիտեմք, զի որպէս առաջին սատարող զտայք գործոյս, ոչ ինչ վերջանայք 'ի ձեռընկալութենէ ատի։ Ընկալջիք և զստորագրութիւն մեր ատանօր 'ի ցոյց հաւանութեան մեր ամենեցուն ընդ պատշաճութիւն խորհրդոյդ։ Ողջ լերուք յաւերժ կենօք 'ի փառս ազգիս, և 'ի պարծանս Ս. Աթոռոյդ, (յ30 Մայիսի. 1839)։

Գաբրիէլ Եպիսկոպոս Նիկոմիդացին, Պատրիարք Ս. Աթոռոյն Երուսաղէմի՝ հասեալ 'ի բարւոք ծերութիւն՝ վախճանեցաւ ('ի 25 Ապրիլի, 1840) և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց, կրելով զանուն Պատրիարգութեան եւ եթ զամս 21, կացեալ 'ի վտարանդութեան